ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/3 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«08» «հուլիսի» 2021թ.,**
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում
առանձին գործառույթներ համակարգող Կարինե Սերոբյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ՝ Վահե Խաչատրյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետ՝ Հասմիկ Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2021թ. հուլիսի 06-ին ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021թ. հուլիսի 7-ին Ժամը 10:00-12:00-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Սմարթլայն ՍՊԸ	010 55 84 83/108	01548908
2	Մայ Մարկետ ՍՊԸ	043 37 07 05	00184008
3	Սոնիկ Երիցյան Աշոտի ԱՁ	043 24 22 24	23238517
4	ԱՌԷԱ Պապիրուս ՍՊԸ	091 42 10 44	02584897

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերի մասին.

3.2.1 «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ-ի և Սոնիկ Երիցյան Աշոտի ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջների համապատասխան:

3.2.2 Մայ Մարկետ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անճշտություն /կազմակերպության անվանումը մուտքագրված է ոչ լիարժեք/, ինչպես նաև առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում /հավելված 1.1/ 3-րդ, 11-րդ և 21-րդ չափաբաժիններում առաջարկվող ապրանքները հստակ չեն նկարագրված:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել Մայ Մարկետ ՍՊԸ-ին,որպեսզի սահմանված ժամկետում շտկի նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Կարինե Սերոբյան	
Անդամներ՝	Վահե Խաչատրյան	
	Հասմիկ Ավետիսյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	